11 նոյեմբերի 2025թ.

Թիվ E 36-560

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՖԱՍԹ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, ք. Երևան, Նորք Մարաշ, Գ. Հովսեփյան 32/6,
Հեռ.՝ (+37410) 510000 (1515)
Էլ. փոստ՝ dealing@fcc.am

Տեղեկացնում ենք, որ՝

- 2025 թվականի նոյեմբերի 3-ին գումարվել է «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի Բաժնետերերի Ընդհանուր ժողով՝ Կանոնադրական կապիտալի ավելացման, Թողարկվող լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման և Խորհրդի անդամ Արմեն Քթոյանի լիազորությունների դադարեցման հարցերով:
- 2025 թվականի հոկտեմբերի 23-ի Խորհրդի DEC 11-22 որոշման համաձայն հաստատվել է «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի երրորդ տրանշի դրամային պարտատոմսերի տեղաբաշխման հարցը, որի համաձայն «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ն 2025 թվականի Նոյեմբերի 10-ից մինչև 2026 թվականի մարտի 10-ը թողարկում և տեղաբաշխում է 12,000,000,000 (տասներկու միլիարդ) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, կիսամյակային վճարման պարբերականությամբ, 10,75% տարեկան տոկոսադրույքով և երկու տարի մարման ժամկետով դրամային, չփոխարկվող, կորպորատիվ պարտատոմսեր:
- 2025 թվականի հոկտեմբերի 20-ին «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի կողմից Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ-ին ներկայացվել է AMFSCRB2LER1 ԱՄՏԾ կոդով պարտատոմսերի ցուցակման դիմում-հայտը:
- 2025 թվականի Նոյեմբերի 11-ին «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի կողմից Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ-ին ներկայացվել է AMFSCRB2KER3 ԱՄՏԾ կոդով պարտատոմսերի ցուցակման դիմում-հայտը:

Գործադիր տնօրեն-
Տնօրինության նախագահ՝ **Գարեգին Դարբինյան**

Կապարող՝
Ներդրումային գործառնությունների մասնագետ Վահագն Բեջիշյան
Հեռ.՝ (+37410) 51 00 20